


Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)

2021թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական	3
ԱԱԳԼ բաժանմունքների գիտական գործունեության հաշվետվություն	8
1. Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք)	8
2. Փորձարարական ֆիզիկայի բաժանմունք	11
3. Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին	14
4. Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն	16
5. Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժին	17
6. Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին	19
7. Հաշվողական ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժնի (ՀՖ և ՏՏ)	20
Կադրային տվյալներ	22
Տեղական և միջազգային համագործակցություն	24
Գործուղումներ	28
Նոր և ընթացիկ դրամաշնորհային ծրագրեր	32
Կազմակերպած միջոցառումներ	41
Գիտաժողովներ, աշխատաժողովներ	41
Ծրջայցեր	42
Հիմնական սեմինարներ	43
Կոլոքվիում	45
Էքսպո	46
Հանրային միջոցառումներ	46
Մասնակցություն գիտաժողովներին, աշխատաժողովներին և սեմինարներին	47
Ինստիտուտի ներկայացուցչական մասնակցությունը արտաքին միջոցառումներին	50
Կրթական համակարգն ԱԱԳԼ-ում	51
Հասարակայնության հետ կապեր և լրատվություն	56
Մամուլի անդրադարձն ԱԱԳԼ-ին	56
Մամուլի անդրադարձը կրիոգեն կայանին	59
ԱԱԳԼ ենթակառուցվածքի զարգացում, վերազինում և արդիականացում	60
1. Առաջնակարգ դետեկտորներով լաբորատորիա	60
2. 1000-դասի մաքուր սենյակ	61
3. Նոր կրիոգեն կայան	61
Տեխնոլոգիական բյուրո N 500/2-1 ստր.	62
Արտադրական տեղամաս N500/2-2 ստր.	64
Արտադրական տեղամաս N500/2-2 ստր.	64
Տեխնիկական սպասարկման խումբ N 500/4-1 ստր.	65
Գիտական հոդվածների ցանկ	67

2021 թվականին «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, այսուհետ՝ ԱԱԳԼ)» հիմնադրամում իրականացվել են հետազոտություններ փորձարարական և տեսական ֆիզիկայի, կիրառական, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների և կոսմոլոգիայի բնագավառներում հետևյալ հիմնական ուղղություններով.

- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (Տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի տեսություն, Զվանտային Զրոմոդինամիկա, Նեյտրինային ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Զվանտային տեխնոլոգիաներ, քվանտային ֆիզիկա, կոնդեսացված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա,
- LHC-75 էլեկտրոնային գծային արագացուցչի արդիականացում,
- Պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի հազեցվածության բարձրացում ,
- Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC),
- Հետազոտություններ Jefferson Lab-ի A, B, C և D փորձարարական սրահներում,
- Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA),
- Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին,
- Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ,
- Հետազոտություններ նյութագիտության ոլորտում,
- 18 ՄԷՎ էներգիայով պրոտոնային և 3.5 ՄԷՎ էներգիայով էլեկտրոնային փունջերով հարուցված երևույթների ուսումնասիրությունը սիլիցիումի բյուրեղներում,
- Հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի ֆիզիկաօպտիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրում,
- Փնջի պրոֆիլի չափման նպատակով հիմնավորված, նախագծված և արտադրված է նոր տեսակի լարային մոնիտորներ,
- Պերովսկիտային նյութերի սինթեզ և օպտիկական հատկությունների ուսումնասիրում,
- Գրաֆենային հիմքով պերովսկիտային արևային բջիջների ստացում և ուսումնասիրում,
- Ռադիոկենսաբանական հետազոտություններ ԱՐԵԱԼ արագացուցչի էլեկտրոնային փնջի վրա,
- Գեոդեզիական հոսքերի հիպերբոլականություն,
- Հարի լարվածություն, դիտողական այլ անոմալիաներ, մոդիֆիկացված գրավիտացիա,
- Գալակտիկական մուժ հալոները ըստ Պլանկ արբանյակի միկրոալիքային տվյալների,
- Արհեստական բանականություն, մեքենայական ուսուցման մեթոդներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում,
- Գերնորեր և գալակտիկաների մորֆոլոգիա,
- Մթնոլորտում բարձր էներգիայի ֆիզիկայի համար (HEAP),
- Բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակում, արտադրություն: Մասնավորապես աշխատանքներ են տարվել ռադիոակտիվ իզոտոպների հետազոտման ուղղությամբ՝ ^{99m}Tc , ^{67}Ga , ^{68}Ga և ^{64}Cu ,
- Հաշվողական համակարգերի վերագինում, ծրագրային փաթեթների սպասարկում, թարմացում և նոր հաշվողական ծրագրերի տեղադրում,
- Խոշոր միջազգային համագործակցություններում (Belle II, մասնակիորեն Hermes) ստացված մեծաքանակ տվյալների մշակում, ֆիզիկական արդյունքների ստացում:

ԱԱԳԼ-ի աշխատակիցների թիվը կազմում է 354, այդ թվում՝ 154 գիտնականներից բաղկացած գիտական անձնակազմ և 107 ճարտարագիտատեխնիկական անձնակազմ, մնացած 93-ը՝ վարչակազմ: Աշխատակիցներից գիտական աստիճան ունեն 108-ը, ընդ որում՝ 22 գիտությունների դոկտոր և 86 գիտությունների թեկնածու, որոնցից 9-ն ունի պրոֆեսորի կոչում:

Առաջնորդվելով ԱԱԳԼ գիտական խորհրդի կողմից հաստատված «Ա.Ի. Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) հիմնադրամի գիտական աշխատողների ատեստավորման կարգը և գործունեության գնահատման չափանիշները» կարգով և ՀՀ կառավարության 2001 թ.-ի հոկտեմբերի 3-ի N 935 որոշմամբ՝ 2021 թվականին իրականացվել է ԱԱԳԼ գիտական աշխատողների ատեստացիա: Ատեստավորմանը մասնակցել են ինչպես գիտական պաշտոններ զբաղեցնող, այնպես էլ գիտական պաշտոնների փոխադրման ցանկություն հայտնած ԱԱԳԼ աշխատակիցները: Չբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցով կայացած գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա կայացվել են հետևյալ որոշումները՝ 32 գիտական աշխատող համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, 7-ը՝ ոչ, 26 ավագ գիտական աշխատող համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, 4-ը՝ ոչ, 17 առաջատար գիտական աշխատող համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, 3-ը՝ ոչ:


Չբաղեցրած պաշտոնից փոխադրման հարցով կայացած գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա կայացված որոշումների թվային պատկերը բերված է ստորև՝

	«կրտսեր գիտական աշխատող»	«գիտական աշխատող»
«ստաժոր-հետազոտող»	18	7
		«գիտական աշխատող»
«առաջատար ճարտարագետ»		1
«առաջատար ճարտարագետ էլեկտրոնիկ»		1
«խմբի ղեկավար»		1

Աղյուսակ 1

Կոնկրետ դեպքերում հանձնաժողովի կողմից ատեստավորվողին տրվել է զբաղեցրած պաշտոնից բարձրացման կամ զբաղեցրած պաշտոնից իջեցման համար երաշխավորություններ:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԱԳԼ-ն գրանցել է շոշափելի արդյունքներ գիտական, համագործակցության, ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Այս մասին են վկայում գիտաաշխատողների կողմից մոտ 251 հոդվածների տպագրությունը գիտական միջազգային բարձր ազդեցության գործակցով ամսագրերում, միջազգային գիտաժողովների մասնակցությունը, զեկույցների քանակը (հասնում է 69-ի), կազմակերպված գիտական միջոցառումները՝ 5 գիտաժողով և աշխատաժողով, գիտական 21 սեմինար (նշված են առավել մասշտաբայինները. ընդհանուր քանակն ավելի մեծ է), 2 կոլոքվիում, ինստիտուտի 2 ներկայացուցչական մասնակցություն արտաքին միջոցառումներին և այլն:



Նկ. 1

Տարի	2019		2020		2021	
	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.
Հայաստան	1273	25800	1142	26078	959	25743
ԱԱԳԼ	411	17600	325	17648	251	17251
%	32%	68%	28%	68%	26%	67%

Աղյուսակ 2

Ակնհայտ է, որ գիտական գործունեության առաջխաղացմանը մեծապես նպաստում են միջազգային և տեղական համագործակցությունները: ԱԱԳԼ-ն ընդհանուր առմամբ ունի 70 և ավել համագործակցություններ, որոնց թվում են նաև միջազգային խոշորագույն գիտափորձեր, ինչպիսիք են՝ CERN, JLAB, DESY, KEK (Belle 2), HESS, MAGIC, NICA, EIC և դրանց բաղադրիչ մաս կազմող համագործակցությունները: Նշենք, որ հետևողական աշխատանքի շնորհիվ 2021 թվականին ստեղծվել և ընդլայնվել են NICA, EIC և այլ համագործակցություններ, համատեղ կրթական ծրագրեր իրագործելու նպատակով տեղական համագործակցություն Հայաստանում Փրանսիական համալսարանի հետ՝ ամրագրված 2021-ին կնքված հուշագրով:

2021 թվականին գործուղումների թիվը կազմել է 41, որոնց հիմնական նպատակն է եղել ընթացիկ համագործակցության շրջանակներում համատեղ աշխատանքների իրականացումն ու գիտափորձերի մասնակցությունը, որոշ դեպքերում նաև ստաժավորումը: Գործուղման հիմնական երկրներն են՝ Շվեյցարիա (CERN), Շվեյցարիա (Ժնև), Ֆրանսիա (ք.Գրենոբլ), Ֆրանսիա (ք. Դիժոն), Իտալիա (ք.Սալենտո), Իտալիա (ք. Հռոմ), Իտալիա (ք.Տրիեստ), Իսրայել (ք.Թել Ավիվ), Գերմանիա (Մյունխեն), Իսպանիա (ք.Բիլբաո), Հունաստան (ք. Քորֆու), ԱՄՆ (ք. Նոտր Դամ), ԱՄՆ (ք.Քենթրիջ), ԱՄՆ (ք. Մերիլենդ), ՌԴ (ք.Սանկտ Պետերբուրգ), ՌԴ (ք.Մոսկվա), ՌԴ (ք. Դուբնա):

Գիտության կոմիտեի դրամաշնորհների քանակային աճի և ԱԱԳԼ-ի գիտական գործունեության բարձր մակարդակի և գիտաշխատողների զգալի ակտիվության շնորհիվ այս տարի ստացված դրամաշնորհների աննախադեպ աճ է գրանցվել:

Գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհների մրցույթներում ֆինանսավորում ստացած ԱԱԳԼ նախագծերը՝

- Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ծրագրերում եւ (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի արդյունքներով ֆինանսավորման են երաշխավորվել ԱԱԳԼ **28 գիտական թեմաների ղեկավարներ**:
- Ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականների հավելավճարների տրամադրման մրցույթում ԱԱԳԼ **6 երիտասարդ գիտնական** է ֆինանսավորվել:
- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսավորում տրամադրելու մրցույթում ԱԱԳԼ-ն ֆինանսավորվել է **2 սարքավորման** ձեռքբերման համար:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել ԱԱԳԼ **8 գիտական թեմա**:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է ԱԱԳԼ **11 գիտական թեմա**:
- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթում ֆինանսավորման է երաշխավորվել ԱԱԳԼ **3 նախագիծ**:

- «Ասպիրանտների եւ երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2021» մրցույթի արդյունքներով ֆինանսավորման է երաշխավորվել ԱԱԳԼ **4 գիտական թեմա**:
- Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդման աջակցության մրցույթում ֆինանսավորման են երաշխավորվել ԱԱԳԼ **2 գիտական թեմա**:
- Երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթում ֆինանսավորման է երաշխավորվել ԱԱԳԼ **2 գիտական թեմա**:
- Գիտական սարքերի եւ (կամ) նյութերի ձեռք բերման համար ֆինանսավորվել է ԱԱԳԼ **2 հայտ**:

Այլ մրցույթներում ևս ստացվել են մոտավորապես **12** տեղական ոչ պետական դրամաշնորհներ և մոտավորապես **5** միջազգային դրամաշնորհներ:

Երիտասարդների թվի կտրուկ ավելացումը ԱԱԳԼ-ի ռազմավարության կարևորագույն կետերից է: Այս ուղղությամբ կատարվել է ահռելի աշխատանք, ինչի արդյունքում իրականացվել է թեկնածուական երկու պաշտպանություն, ԱԱԳԼ ասպիրանտուրա են ընդունվել 3 ասպիրանտ և հայցորդ, մագիստրատուրա՝ 3 ուսանող: Արդյունքում ԱԱԳԼ-ն ունի 13 ասպիրանտ և հայցորդ, 5 մագիստրանտ: Ընդհանուր առմամբ 49 փորձնակ ուսանող է գրանցվել ԱԱԳԼ-ում, որից 16-ը 2021 թվականին է ընդունվել տարբեր գիտական բաժանմունքներում: 2021 թվականին առաջին անգամ 11 արտասահմանյան և տեղացի ուսանող ԱԱԳԼ-ում ընդունվել են ինթերնշիփի:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է դպրոցականների և ուսանողների 7 շրջայց, բացի մագիստրատուրայի ընթացիկ ներքին և արտագնա դասախոսություններից՝ ևս 6 դասախոսություն, 5 հանրային միջոցառում՝ այդ թվում նաև մեկ էքսպո: Գիտաժողովի կազմակերպման համար գրանցվել և մասնակցել են գրեթե 83 ուսանող-կամավոր: 2021 թվականին ավարտին են հասել թանգարան-էքսպերիմենտարիումի վերանորոգման աշխատանքները, հայթայթվել է ֆինանսավորում և սարքավորումներ՝ նախատեսված սարքավորումների քանակը որոշ չափով համալրելու համար: Սա կրելու է շարունակական բնույթ: Կրթական կենտրոնի ստեղծման նպատակով կատարվել է ծավալուն աշխատանք, արձանագրվել են զգալի արդյունքներ:

Կարևոր ռազմավարական նշանակություն ունի նաև գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների արդիականացումը և զարգացումը: ԱԱԳԼ-ն այս ուղղությամբ ևս խոստումնալից առաջընթաց է գրանցել: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել 246 հատ սարք, գիտական սարքավորում, գրասենյակային կահույք՝ ընդհանուր 403,594,468.06 ՀՀ դրամ արժողությամբ: Այդ թվում՝ մոտ 65 գրասենյակային կահույք (գրասեղան, աթոռ, պահարան), 11 ցանցային համակարգի կոշտ սկավառակ, 2 UPS արտաքին մարտկոց, 2 APC փոխարինող մարտկոցի փամփուշտ, 6 ռոուտեր, 2 WI-FI կամուրջ, 5 սվիչ, 4 մոդեմ, 8 տեսախցիկ, 2 տեսաձայնագրիչ, 6 օդորակիչ, 6 օդի զտման սարքավորում և այլն: Փորձարարական տարբեր հետազոտական աշխատանքների համար ձեռք է բերվել 8 խոշոր սարք, երկուսի համար էլ ֆինանսավորում է ստացվել ու ընթացիկ պլաններում է:

Ենթակառուցվածքների արդիականացման և տեխնոլոգիական վերագինման ամենաակնառու ձեռքբերումներն այնուամենայնիվ հանդիսանում են երկու խոշոր լաբորատորիաները՝ 1000-դասի մաքուր սենյակ ու Առաջնակարգ դետեկտորներով լաբորատորիա, և նոր կրիոգեն կայանը: Որոնց համար ԱԱԳԼ-ն ստացել է խոշոր նվիրատվություններ՝ ընդհանուր առմամբ 366,559,383 դրամ ծավալով:

Վերանորոգվել և շահագործման են հանձնվել թվով 12 սենյակ, այդ թվում սեմինարների դահլիճը, ինտերակտիվ թանգարանը, ինչպես նաև նոր կրիոգեն կայանի համար աստիճանավանդակ, միջանցքներ և այլ տարածքներ: Կատարվել են հսկայածավալ աշխատանքներ Արագած կայանում, Նոր-Ամբերդում, քոթեջներում, կրիոգեն կայանում և տարբեր ստորաբաժանումներում: Իրականացվել են փոփոխություններ փորձարարական արտադրամասում, ընդունվել են նաև արտաքին պատվերներ. արդյունքները խոստումնալից են:

2021 թվականին ԱԱԳԼ-ն ունեցել է հետևյալ դրամական ներհոսքերը.

միջազգային դրամաշնորհ	72,457,174.00
արտաբյուջետային ներհոսքեր	147,800,213.00
ԿԳՄՍ	1,266,600.00
նվիրատվություն	366,559,383.00
բազային ֆինանսավորում	688,995,300.00
գիտկոմից մուտքեր	559,660,300.00
ասպ. մագ. Կրթաթոշակ	3,809,100.00
ընդհանուր	1,840,548,070.00

Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2021թ.-ի ընդհանուր մուտքերի մեջ	37 %
Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2021թ.-ի մուտքերի մեջ՝ առանց գիտկոմի	54 %

Աղյուսակ 3

ԱԱԳԼ-ն որդեգրել է գիտության հանրայնացման խթանման քաղաքականություն և իր գիտական գործունեության տպավորիչ արդյունքների շնորհիվ հաշվետու տարվա ընթացքում մշտապես եղել է մամուլի ուշադրության կենտրոնում: Դրա մասին է վկայում 2021 թվականին գրանցած հետևյալ թվային պատկերը՝ Ասուլիսների հրավեր և մասնակցություն՝ 4, Հարցազրույցների հրավեր և մասնակցություն՝ 19, Մամուլը մեր մասին՝ 83, Նկարահանված հոլովակներ ինստիտուտի մասին՝ 12, Կազմակերպված սեմինարների լուսաբանում ինստիտուտում՝ 17:

ԱԱԳԼ գիտական ուղղություններով բաժանմունքների մանրամասն հաշվետվությունները, ինչպես նաև ներառական բաժնում տրված քանակական ցուցանիշների մեկնաբանությունները մանրամասն ներկայացված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

1. Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք)

Հաշվետու ժամանակահատվածում **Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (Տեսական Բաժանմունք)** հետազոտությունների իրականացման հիմնական ուղղությունները են եղել՝

- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (Տարրական մասնիկների և միջուկային Ֆիզիկայի տեսություն, Քվանտային Զրոմոդինամիկա, Նեյտրինային Ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Քվանտային տեխնոլոգիաներ, քվանտային ֆիզիկա, կոնդենսցված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա:

Գրանցվել են հետևյալ հիմնական արդյունքները.

I. Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա

1. $\bar{B} \rightarrow X_s \gamma$: α_s^2 ուղղումները ֆիզիկական (ոչ գրո) c քվարկի զանգվածի համար:

Հայտնի է, որ մեր աշխատանքում ներդրման մի մասը ստացվել է մեծ m_c -ի համար ասիմտոտիկ արտահայտության և $m_c = 0$ արդյունքների ինտերպոլյացիայի միջոցով: Այժմ մենք կփորձենք կատարել հաշվարկներ m_c -ի ֆիզիկական արժեքի համար: Ավելի ճիշտ մենք հաշվարկելու ենք $(O_7 - O_{1,2})$ օպերատորների ինտեֆերենցիայի ներդրումը m_c -ի ֆիզիկական արժեքի համար:

Արդեն հաշվարկված են որոշակի թվով դիագրամներ, մշակված են մեթոդներ: Հաշվարկներն ընթացքի մեջ են:

2. Կրկնակի դիֆերենցիալ լայնությունը $\bar{B} \rightarrow X_s \gamma \gamma$ տրոհման համար α_s կարգում:

Քանի որ Super B- ի գործարաններում նախատեսվում է չափել $\bar{B} \rightarrow X_s \gamma \gamma$ տրոհումը, որը բավականին զգայուն է նոր ֆիզիկայի ներդրումների նկատմամբ, մենք նախատեսում ենք իրականացնել տրոհման հետագա ուսումնասիրությունը: Մենք ծրագրում ենք հաշվարկել ԱԼՀ ԲԶԴ այն ուղղումները $\bar{B} \rightarrow X_s \gamma \gamma$ տրոհման կրկնակի դիֆերենցիալ $d\Gamma(s_1, s_2)/(ds_1 ds_2)$ լայնության համար, որոնք գալիս են O_7 և $O_{1,2}$, O_7 և O_8 օպերատորների ինտեֆերենցիայից:

Այստեղ նույաես գնում են հաշվարկներ, հիմնականում կապված մեծ թվով ինտեգրալները վարպետ ինտեգրալների բերելու հարցին: Հաշվարկները կարագանան, երբ գնվեն նոր սերվեր և համակարգիչներ թեմայի միջոցների հաշվին:

3. $\alpha_s^2 N_f$ ուղղումներ $B_s - \bar{B}_s$ խառնման համար թույլ օղակում c-քվարկի ոչ գրոյական զանգվածի համար

Այս խնդրի նպատակն է վերջացնել Վիլսոնի գործակիցների $\alpha_s^2 N_f$ -ին համեմատական ԲԶԴ ուղղումների հաշվարկը էֆեկտիվ տեսության վեց չափողականության օպերատորների համար c-քվարկի ռեալ զանգվածի համար, որը հաշվարկի ամենաբարդ մասն է: Օգտագործելով այդ

ուղղումները մենք պլանավորում ենք թարմացնել B_s մեզոնների կյանքի տևողության տեսական կանխագուշակումները:

Հետագուովել է NICA SPD (Դուբնա) գիտափորձի ֆիզիկային պոտենցիալը: Պատրաստվել և հաստատվել է JINR (Դուբնա) PAC-ում CDR (Conceptual Design Report) NICA SPD (Spin Physics Detector) գիտափորձի համար: Տեսական Բաժանմունքի առ. գ.ա. Ա. Իոաննիսյանը կատարել է աշխատանքներ և որպես տեսաբան ունեցել է ներդրում նեյտրինային ֆիզիկայի հետ կապված երսպերիմենտալ համագործակցությունում (JUNO):

II. Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, մաթեմատիկական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ

Ուսումնասիրվել են տրամաչափային տեսությունները՝ օգտվելով վերջերս զարգացում ստացած ունիվերսալության մոտեցումից, որն իր հերթին հիմնված է տրամաչափային խմբերի L -ի պարզ հանրահաշիվների՝ Վաժելի ունիվերսալ պարամետրիզացիայի վրա: Այս մոտեցման նպատակահարմարությունը տրամաչափային/լարեր դուալությունն ուսումնասիրման գործում հիմնավորվում է մասնավորապես այն բանով, որ Վաժելի պարամետրերը, պարզվում է, կապվում են տոպոլոգիական լարերի տեսության պարամետրերի, ինչպիսիք են՝ փոխազդեցության հաստատունը, գտված պարամետրերը, Կահիլերի պարամետրերը, բավականին պարզ առնչություններով: Մենք պատրաստվում ենք ուսումնասիրել Չերն-Մայնոս(QU) /տոպոլոգիական լարեր դուալության տարաբնույթ ասպեկտներ, ինչպիսիք են՝ բացառիկ խմբերի վրա ստեղծված տեսությունների ու գտված տոպոլոգիական լարերի դուալությունը, Վաժելի սիմետրիայի անոմալիան, և այլն: Բացի դրանից, մենք պատրաստվում ենք ուսումնասիրել ունիվերսալ բանաձևերի, օրինակ՝ քվանտային չափողականությունների հատկությունները, դրանց կապը կոնֆիգուրացիաների հետ, գծորեն լուծելիության հատկությունները, և այլն:

Շարունակվել է փոխազդող բարձր սպինով (FSU) տեսությունների ուսումնասիրությունը հարթ և AdS տարածություններում, այս անգամ ուսումնասիրելով լոկալ անվերջ չափանի բարձր սպինով դաշտերի տրամաչափային սիմետրիաներն ու քվանտային վարքը: Կիրառելով բարձր սպինով պրոպագատորի և խորանարդային փոխազդեցության՝ հարթ և AdS տարածություններում ստացած մեր նախորդ արդյունքները, առաջարկվել է մեկ օղականի դիագրամների հաշվելու ոչ տրիվիալ մեթոդ, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու տրամաչափային և կոնֆորմ անոմալիաներն բարձր սպինով դաշտերի համար գույգ չափողականություն ունեցող տարածություններում:

Ուսումնասիրվել են էկզոտիկ ինստանտոնների կողմից առաջացած ուղղումները քառաչափ և ութաչափ $U(N)$ տրամաչափային տեսություններում: Ինչպես և նախկինում ենթադրվում էր, ութաչափ պրեպոտենցիալը կարելի է հաշվել՝ կիրառելով պլետիստիկ բանաձևը, որը ցուցաբերում է կախվածություն միմիայն «զանգվածների կենտրոնից»՝ պայմանավորված անկլինագծային $U(1)$ տրամաչափային բաղադրիչով: Ընդհակառակը, ութ և չորս չափերում կիրալ կոռեյացիոն ֆունկցիաները ցուցաբերում են ոչ տրիվիալ կախվածություն ողջ տրամաչափային խմբից: Ավելին, համապատասխան ռեզոլվենտը՝ կոռեյատորների գեներացնող ֆունկցիան, կոմպակտ կերպով կառուցվել է ինչպես ութ, այնպես էլ քառաչափ դեպքերում: Նաև մեկնաբանվել է զրոյական վեցանկյուն Վիլսոնի օղակը $N = 4$ Մուլեր Յանգ-Միլում, կամ, ավելի ճշգրիտ, դրա մատրիցային մասի ինտեգրալ ներկայացումը ADHM-ի նման հավասարումների միջոցով: Այս կերպ մենք կարողացել ենք կիրառել լոկալիզացիոն տեխնիկա և Յունգի դիագրամներով կոմբինատոր արտահայտություններ ստացել:

Դիտարկվել է $N=2$ Մուլեր Յանգ-Միլս տեսությունը՝ Ω ֆոնում, այսպես կոչված Նեկրասով-Շատաշվիլու սահմանում, մինչև չորս հիպերմուլտիպլետների առկայությամբ: Այստեղ ուսումնասիրում ենք A- ցիկլի ստացման տարբեր եղանակներ, որպես շարք q ինստանտոնային

պարամետրից: Մենք առաջարկում ենք A- ցիկլը հաշվարկելու մի նոր մեթոդ և հստակ հաշվարկներով ցույց տալիս դրա արդյունավետությունը: Ինստանտոնային հաշվարկ կատարելու մեր ձևը շահավետ է համեմատած հայտնի ստանդարտ մեթոդների հետ, այն քիչ ջանքեր գործադրելով թույլ է տալիս հասնել ավելի բարձր կարգով անդամների: Այս մոտեցումը կիրառվում է մինչև չորս հիպերմուլտիպլետով դեպքերի համար: Մենք նաև զարգացրել ենք A- ցիկլը հաշվելու մի թվային մեթոդ որը կիրառելի է q- ի կամայական արժեքների դեպքում: Ցույց ենք տվել որ այս մեթոդը համաձայնության մեջ է գտնվում Ալեկսեյ Չամայոդչիկովի՝ մեծ q –ի ասիմտոտիկ պահվածքի մասին հայտնի ենթադրություն հետ:

Շարունակվել են ուսումնասիրվել Ինտեգրվող մոդելների տեսություններ և նրանց կապը երկրաչափական և սուպերսիմետրիկ մոդելների և տեսությունների հետ: Մենք դիտարկել ենք բևեռացված լույսի տարածումը Մաքսվելի ձևան աչք բեկման ցուցիչ ունեցող միջավայրով: Ցույց է տրված որ բևեռացումը խախտում է միջավայրի լրացուցիչ համաչափությունները այնպես որ ֆոտոնի հետագծերը այլևս փակ չեն: Առաջարկվել է բևեռացումից կախված բարելավված բեկման ցուցիչ որը վերականգնում է սկզբնական ցուցիչի բոլոր համաչափությունները և ապահովում է բևեռացված լույսի փակ հետագծեր: Ներկայացվել են բևեռացումից կախված շարժման ինտեգրալների բացահայտ տեսքերը և դրանց համապատասխան ճառագայթային հետագծերը: Ուսումնասիրվել է նաև Մաքսվելի ձևան աչք պոտենցիալ էներգիայի պրոֆիլ ունեցող գրաֆենի քվանտային կետը: Օգտագործվել է քվազիդասական մոտավորություն հաշվի առնելով որ պոտենցիալ էներգիան կորդինատների դանդաղ փոփոխվող ֆունկցիա է: Չրո էներգիայի մոտ էներգետիկ սպեկտրը մակրոսկոպիկ այլասերված է:

III. Քվանտային տեխնոլոգիաներ, քվանտային ֆիզիկա, Վիճակագրային ֆիզիկա Տոպոլոգիական մեկուսիչներ, SPT փուլեր, Քվանտային Հոլի էֆֆեկտ, եռաչափ ինտեգրելիություն, Ոչ-կրիտիկական լարեր, ուժեղ փոխազդեցություններ,, կիրառական մաթեմատիկա, կենսաֆիզիկա.

Ըստ ծրագրի՝

- Ուսումնասիրել ենք Լեւին-Գու մոդելի ընդհանրացումների հնարավորությունը հիմնված է 2D Z2 Ising մոդելի անալոգի վրա: Կառուցված է նոր Z3 համաչափություն ունեցող եզրային մոդել, որը հանդիսանում է հայտնի XY մոդելի անալոգը, որը արաջանում է Z2 համաչափություն ունեցող Լեւին-Գու-ի մոդելում: Մենք ցույց ենք տալիս, որ սպին մեկ համակարգերում կան տարբեր ինքնագույգ եզրային Համիլտոնյաններ և, հետևաբար, հնարավորություններ առանց զանգվածի մոդելներ ստանալու համար: Այս ռեժիմները հիմք են հանդիսանում տարբեր SPT փուլերի համար: Նախապատրաստվում է տպագրություն:
- Ուսումնասիրել ենք կառուցված մոդելի սպեկտրի հատկությունները: Պարզել ենք որ մոդելը ունի ինքնադուրսության հատկություն, որը նշանակում է, որ եզրային մոդելը զանգված չունի: Ուսումնասիրել ենք նոր եզրային մոդելների բազմությունը և նրանց տոպոլոգիական դասակարգումը: Ուսումնասիրվել են կարուցված մոդելների ստատստիկ/անիոնային հատկությունները: Ուսումնասիրվում է նրանց դերը տոպոլոգիական մեկուսիչների դեպքում: Նախապատրաստվում է տպագրություն:
- Բացահայտել ենք խորանարդ հավասարումների նոր լուծումներ R-մատրիցի համար, որոնք ի լրումն Կիտաևի մոդելի, պարունակում են փոխազդեցություն: Գտել ենք ստացված մոդելների R-մատրիցայի ֆերմիոնային ներկայացումը: Նախապատրաստվում է տպագրություն:
- Առաջարկվել է քվանտային ալգորիթմների նոր, ավելի էֆեկտիվ դաս:
- Ներմուծել ենք նոր մոտեցում նույնական քվանտային մասնիկների նկարագրման համար:
- Առաջարկել ենք տեսական մոտեցում մագնիտոկենսաբանական էքսպերիմենտների նկարագրման համար:
- Մետաղ պարունակող միացությունների քվանտային փոխկապակցվածությունները, մագնիսացման հարթակները, մագնիսական ընկալունակությունը, տեսակարար

ջերմունակությունը , ջերմային խճճվածությունը և գտնել գտավ գերկայուն կետեր, ցիկլեր՝ դինամիկ տեխնիկայով:

- Չարգացրել ենք նոր տեսություն, որի նպատակն է հաշվել միկրոկանոնիկ համակարգի էնտրոպիան ֆիկսված մագնիսականության դեպքում՝ առանց ուղիղ հաշվարկի: Մեթոդը հիմնված է մինիմիզացիայի սկզբունքի վրա (min-max procedure): Սկզբնական փուլում մեթոդը կիրառվել է հեռահար- և մոտակա-փոխազդեցություններով Իզինգի շղթաների հատկությունները ուսումնասիրելու համար: Շարունակելով համագործակցությունը այժմ մեթոդը կիրառում ենք համակարգի միկրոկանոնիկ հատկությունները հետազոտելու համար:
- Արվել են հետազոտություններ Էվոյուցիայի տեսությունից, պատահական մատրիցաների բնագավառում և պարտադրված ուսուցման բնագավառում: Ամենալուրջ արդյունքը դա պարտադրված ուսուցման ստատիստիկական տեսության կառուցումն է, ինչն էլ նաև կենդանի համակարգերի ընդհանուր տեսության կառուցումը, հիմնված արտացոլումների տեսության և ոչ կարգավորված համակարգերի վիճակագրական ֆիզիկայի վրա: Կառուցվել է համավարակի ստատիստիկական ֆիզիկայի նոր մոդել:
- Նանոչափային մաքսիմների օպտիկական հատկությունների տեսական հետազոտություն, փորձնական տվյալների վերլուծություն, նոր կիրառությունների հնարավորության ուսումնասիրում: Ցույց է տրվել, որ Ti_2C_3 նանոչափային մաքսիմում հնարավոր է գրգռել քվանտային մակերևույթային պլազմոններ, որոնց ալիքի երկարությունն ընկած է տեսանելի տիրույթում: Սա բացում է նոր հնարավորություններ մակերևույթով ուժեղացված ռամանյան ցրման (SERS) փորձերում ազնիվ մետաղական նանոմասնիկները մաքսիմներով փոխարինելու ուղղությամբ:
- Կատարվել են աշխատանքներ ճառագայթային և լազերային ֆիզիկայի ասպարեզում
- Ա. Կոծինյանը ունեցել է ներդրում Կոմպասս կոլաբորացիայում:

2.Փորձարարական ֆիզիկայի բաժանմունք

Փորձարարական ֆիզիկայի բաժանմունքն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

1.Աշխատանքներ կատարված LNF-75 էլեկտրոնային գծային արագացուցչի վրա

Հաշվետու ժամանակահատվածում LNF-75 էլեկտրոնային գծային արագացուցիչում կատարված աշխատանքները վերաբերվել են արագացուցչի տեխնիկական և պրոֆիլակտիկ աշխատանքներին և փնջով կատարված գիտափորձերին: Ներկայումս գիտափորձերի անցկացման համար ստեղծվել են առավել անհրաժեշտ պայմաններ: Մինչև տարեվերջ կկատարվեն նախատեսված գիտափորձերի մի մասը, իսկ մնացածը կշարունակվի հաջորդ տարի՝ հունվարից սկսած: Էքսպերիմենտները նախապատրաստվել են Փորձարարական ֆիզիկայի Բաժանմունքի և ԵՊՀ-ի խմբերի կողմից: Տպագրության են ուղարկվել երկու հոդված, որոնցից մեկն արդեն տպվել է, իսկ մյուսը լույս կտեսնի հաջորդ տարի առաջին համարում:

Մշակվել են նախորդ տարի LNF-75-ի վրա կատարված բնական նիոբիումի, ռենիումի և վոլֆրամի թիրախների ճառագայթման գիտափորձերի տվյալները, որոնց արդյունքների մի մասն արդեն իսկ տպագրվել են: Նիոբիումի վրա կտրվածքների առաջին անգամ ստացված արդյունքներն ընդգրկվել են միջուկային ռեակցիաների փորձարարական տվյալների EXFOR բազայում:

Շարունակվել է ԱԱԳԼ-ի էլեկտրոնային գծային արագացուցչի վրա 25, 40 և 70 ՄԷվ սահմանային էներգիաներով արգելակման ֆոտոնների փնջերով ճառագայթված տարբեր թիրախների, այդ թվում՝ ածխածնի, շափյուղայի (Al_2O_3), պղնձի, արծաթի, ոսկու, կապարի և բիսմութի գերմանատի ($Bi_4Ge_3O_{12}$) թիրախների զամմա-ակտիվության վերլուծությունը ցածրֆոնային լաբորատորիայում գործող սպեկտրաչափի միջոցով և չափման տվյալների մշակումը: Ստացվել են նախնական տվյալներ մի շարք ֆոտոմիջուկային ռեակցիաների էլքերի վերաբերյալ: Նախապատրաստվել և հրատարակման է առաքվել “Թթվածնի միջուկից 7Be -ի առաջացման հետազոտումը արգելակման ֆոտոններով $E_{\gamma}^{max} = 40$ և 70 ՄԷվ էներգիաների

դեպքում“ հողվածը, որում առաջին անգամ չափվել է $^{16}\text{O}(\gamma, X)^7\text{Be}$ ինկլուզիվ ռեակցիայի ելքը շեմամերձ էներգիաների տիրույթում ($E_\gamma < 40$ ՄէՎ) և ցույց է տրվել, որ առկա տեսական մոդելները չեն նկարագրում փորձարարական տվյալները: Տվյալների մշակումները շարունակական են:

2. Աշխատանքներ կատարված պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի վրա

Չափվել են C18/18 ցիկլոտրոնի պրոտոնային փնջով վոլֆրամի թիրախի ճառագայթումից առաջացած ռենիումի մի շարք իզոտոպների կտրվածքները: Ուսումնասիրվող ռեակցիաների համար կատարվել են գրգռման ֆունկցիաների տեսական հաշվարկներ TALYS 1.95 և EMPIRE 3.2 կոդերի միջոցով: Ստացված արդյունքները համեմատվել են տեսական հաշվարկների և գրականությունում առկա այլ գիտափորձերի արդյունքների հետ:

Շարունակվել են ցիկլոտրոնի վրա 17.5 ՄէՎ սկզբնական էներգիայով պրոտոնների փնջերով ճառագայթված տարբեր թիրախների, այդ թվում՝ պղնձի, թորիումի, ուրանի և բիսմութի գերմանատի թիրախների, զամմա-ակտիվության վերլուծությունը և չափման տվյալների մշակումը: Մասնավորապես, պրոտոնի հինգ էներգետիկական տիրույթներում ($< E_p > = 11.6, 12.0, 13.5, 15.1, 16.5$ ՄէՎ) չափվել են $^{232}\text{Th}(p,n)^{232}\text{Pa}$ ռեակցիայում առաջացած պրոտակտինիում-232 ռադիոնուկլիդի ($T_{1/2} = 1.31 \pm 0.02$ օր) տրոհման կորերը, և ստացվել են նախնական գնահատականներ այդ ռեակցիայի կտրվածքի վերաբերյալ:

3. Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում (LHC)

Շարունակվել են ԱՄԳԼ-ի երեք խմբերի պլանավորված աշխատանքները CERN-ի CMS, ATLAS և ALICE գիտափորձերում: Ի լրացումն այդ աշխատանքների ընդունվել են նոր պարտավորություններ և իրականացվել են հետևյալ նոր ծրագրերը.

- CMS գիտափորձի 2024-26 թթ. նախատեսված «Phase2-Upgrade» արդիականացման նախագծի շրջանակներում իրականացվել է CMS նոր կալորիմետրական համակարգի (High granularity calorimeter) կոսմիկական մյուոններով թեստավորման համար կառուցվող (ՄՀՄԻ, Դուբնա, ՌԴ) փորձարարական սարքավորման մոդելավորումը և օպտիմալացումը: Աշխատանքները սկսվել են Հունիս ամսին Երևանում, և շարունակվել Նույեմբեր-Դեկտեմբեր ամիսներին Դուբնա կատարած այցի ընթացքում:
- Հոկտեմբեր ամսից FermiLab (ԱՄՆ) CMS խմբի հետ համատեղ սկսվել են CMS-ի 2018թ. փորձարարական տվյալներից Սուպերսիմետրիկ մոդելներով կանխատեսվող «Երկարակյաց սուպերսիմետրիկ» Stau մասնիկների որոնման աշխատանքները:
- ATLAS գիտափորձի շրջանակներում մասնակցել ենք TileCal կալորիմետրի «Phase2-Upgrade»-ի հետ կապված նոյեմբերի 4-ից մինչև նոյեմբերի 13-ը տևած beam tests փորձի հերթափոխներին:
- Այս տարի Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում պատրաստվել է ATLAS-ի TileCal-ում ցածր լարման աղբյուրների հեռակառավարումն ապահովող AUXboard3-ի համար Front Panel-ի նախատիպը: Հաջորդ տարի նախատեսվում է պատրաստել և CERN առաքել 80 հատ այդպիսի Front Panel:
- ALICE գիտափորձի շրջանակներում մասնակցել ենք ITS-ի (Inner Tracking System) ներքին հետազոտման համակարգի հավաքման որոշ աշխատանքներին՝ մաքուր սենյակում, L3 մագնիսի մեջ ITS-ի տեղադրման նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաև FIT (Fast Interaction Trigger) դետեկտորի տեղադրման համար նախատեսված բազմաֆունկցիոնալ սեղանի մշակման և պատրաստման աշխատանքներին:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 100-ն է:

4. Հետազոտություններ Jefferson Lab-ի A, B, C և D փորձարարական սրահներում

A սրահում SBS-ի (Super BigBite-Spectrometer) հիմնական դետեկտորների տեղադրումից հետո 2021թ. սեպտեմբերին սկսվեցին հաստատված գիտափորձերից չորսի կատարումը, որը պլանավորվում է ավարտել 2022թ. փետրվարին: Ընթացող գիտափորձերն են.

- E12-09-019: G_M^n (Precision Measurement of the Neutron Magnetic Form Factor)

- E12-17-004: (Ge^n -Recoil)
- E12-20-008: (Wide-Angle Pion Production)
- E12-20-010: Proposal (nTPE)

Եւ սրահում շարունակվել են RGA և RGB փորձերի տվյալների վերլուծության աշխատանքները E12-12-001, E12-12-001A, E12-11-103B, E12-07-104A նախագծերի համար:

- E12-12-001և E12-12-001A էքսպերիմենտների շրջանակում ուսումնասիրվել է CLAS12 դետեկտորի վրա J/ψ -meson- ի շեմին մոտ ֆոտոնման պրոցեսը:
- E12-07-104A էքսպերիմենտում կատարվել են դետեկտորի թիրախից վեկտոր մեզոնների կոհերենտ ֆոտոնման պրոցեսի ուսումնասիրություններ:
- Իրականացվել են CLAS12-ի տրեկինգային համակարգերի՝ կենտրոնական (CD) և առաջնային (FD) դետեկտորների սերվիսային աշխատանքներ, տվյալների հարաբերական կարգավորումների ցուցանիշների շտկումներ:
- Հեռավար կարգով կատարվել են ավելի քան 30 HPS (Heavy Photon) աշխատանքային հերթափոխեր:

2021 թվականին Ջեֆերսոնի Լաբորատորիայի C սրահում շարունակվել է 12 ԳԷՎ էներգիայի էլեկտրոնային փնջով ֆիզիկական գիտափորձերի ծրագիրը, այդ թվում՝

- Մեծ Q2 –ների տիրույթում պիոնների էքսկյուզիվ էլեկտրադինամիկ կտրվածքի L-T բաժանման և F_T ֆորմ-ֆակտորի որոշման E12-19-006 գիտափորձը,
- Կատարվել են չեզոք մասնիկների սպեկտրոմետրի նախագծի հետ կապված աշխատանքներ,
- Կատարվել են ժամանականման Կոմպտոնյան ցրման (TCS) նախագծի հետ կապված աշխատանքներ,
- Իրականացվել են E12-09-017 (“ pt -SIDIS”) գիտափորձից ստացված տվյալների մշակումները:
- Հաշվետու ժամանակաշրջանում ԱՄԳԼ-Յաբ GlueX կոլաբորացիայի անդամները մասնակցել են՝
- D փորձարարական սրահում կատարվող GlueX գիտափորձի շահագործման աշխատանքներին,
- 20 հեռավար հերթափոխերի,
- Շարունակվել են ակտիվ մասնակցությունը COMCAL դետեկտորի կառուցման, տեղադրման և տրամաչափման աշխատանքներին,
- Հատուկ պատրաստված հարթակի վրա ուսումնասիրվել են FCAL (Forward Calorimeter) դետեկտորի վերազինման համար նախատեսված PbWO4 տիպի բյուրեղների և ֆոտոբազմապատկիչների հատկությունները,
- 2021թ. դեկտեմբեր ամսից խումբը ակտիվորեն ներգրավված է տեղում մաքուր սենյակի վերազինման աշխատանքներին,
- Ակտիվորեն ներգրավված ենք FCAL դետեկտորի լուսային մոնիտորինգի համակարգի (Light Monitoring System) կառուցման աշխատանքներին՝ նախատեսված առկա ժամանակային (online) տարբերակով հսկելու PbWO4 տիպի բյուրեղների և PMT-ների հատկությունները փորձերի ժամանակ:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 15-ն է:

5.Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (HESS և CTA)

ԱՄԳԼ-ի ՓՖԲ-ի Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրման (HESS և CTA) խումբը 2021թվականի ընթացքում մասնակցել է H.E.S.S. (High Energy Stereoscopic System) համագործակցության աշխատանքներին, ստեղծել է մի քանի ԳԷՎ-ից բարձր էներգիա ունեցող գամմա-քվանտների և տիեզերական ճառագայթների մաս կազմող

այրոտոնների ու էլեկտրոնների Մոնտե-Կարլո քանկ՝ CTA (Cherenkov Telescope Array) համագործակցության LST1 (Large-Size Telescope) դիտակի համար, կատարել է ուսումնասիրություններ մինչև 100 ԳԷՎ տիրույթի փորձարարական տվյալների մաթեմատիկական վերլուծության նոր՝ ավելի արդյունավետ եղանակների կամ պարամետրերի մշակման ուղղությամբ:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 7-ն է:

6. Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին

Էլեկտրոն-իոնային կոլայդերը (EIC) նախատեսվում է կառուցել Բրուքհեյվենի ազգային լաբորատորիայում: Այն կունենա փնջերի ընդհարման 100-1000 անգամ ավելի մեծ հաճախականություն մինչ այդ եղած էլեկտրոն-իոնային կոլայդերների համեմատ:

Ներկայումս ԱՄԳԼ-ի խումբը նախապատրաստում է անհրաժեշտ նյութատեխնիկական բազան՝ EIC-ի աշխատանքներում լիարժեք ընդգրկվելու համար: ԱՄԳԼ-ում տնօրինության և ամերիկյան բարերարների օգնությամբ կառուցվել է լաբորատոր սենյակ՝ հատուկ մեթոդիկ աշխատանքներ կատարելու համար: Առաջիկա տարիներին, հաշվի առնելով վերոնշյալ օգնության շարունակականությունը, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի կողմից թեմատիկ մրցույթի և ենթակառուցվածքների զարգացման համար հատկացված գումարները, այն կհամալրվի միջազգային ստանդարտներին համապատասխանող էլեկտրոնիկայով և հատուկ չափիչ սարքերով:

7. Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ

Իրականացվել են ուսումնասիրություններ ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի կողմից ֆինանսավորված “Պիկովայրկյանային լուծողականությամբ երկրորդական էլեկտրոնների դետեկտոր Δ հիպերմիջուկների հետազոտությունների համար” և ՄԳՏԿ-ի “RF timer of keV electrons” ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես, կառուցված ՌՀ թայմերի նախատիպը հաջողությամբ փորձարկվել է լաբորատոր պայմաններում թերմոէլեկտրոններով և սինխրոնիզացված լազերի ֆոտոններով Քենդլ ինստիտուտում: Մշակվել և փորձարկվել են տարածազգայուն դետեկտորների համար կիրառվող ուշացման գծերի մի քանի տարբերակ: Կատարելագործվել են տվյալների հավաքագրման և մշակման ծրագրերը, որոնց օգնությամբ իրականացվել են փորձարարական հետազոտություններ:

Խումբը մշակել է գիտահետազոտական նախագծեր, որոնք մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ Գիտության Կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհի մրցույթներին և արժանացել է ֆինանսավորման.

- «ԿԷՎ Էներգիաներով էլեկտրոնների գերբարձր հաճախությունների պարույրաձև սկանավորող համակարգ»
- «Գրաֆենային հիմքով ինֆրակարմիր ճառագայթման կլանիչ թաղանթներ»

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 7-ն է:

8. Հետազոտություններ նյութագիտության ոլորտում

- Ընթացիկ տարում տարբեր նմուշներ սինթեզելու հետ միաժամանակ շարունակվել են սինթեզված ջրալույծ խիտոզանային Շիֆի հիմքերի (ՋԽՇՀ) որոշ հիմնական հատկությունների ուսումնասիրություններ:
- Կատարվել են գրաֆենի և գրաֆենահենք թաղանթների, ածխածնային նանոկառուցվածքների ուսումնասիրություններ:

3. Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին

Հաշվետու ժամանակահատվածում **Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժին** իրականացրել է հետևյալ հետազոտությունները.

1. 18 ՄԷՎ Էներգիայով պրոտոնային և 3.5 ՄԷՎ Էներգիայով Էլեկտրոնային փունջերով հարուցված երևույթների ուսումնասիրությունը սիլիցիումի բյուրեղներում

2021թ. ընացքում պատրաստվել է տիեզերքի Երկրամերձ տիրույթը նմանակող փորձարարական վակուումային խցիկ: Փորձարարական վակուումային խցիկը կցվել է CANDLE Մինքրոտրոնային Հետազոտությունների Ինստիտուտի AREAL արագացուցիչին և ունի հետևյալ պարամետրերը. վակուում 10^{-5} Տորր, 3,5 ՄԷՎ Էներգիայով և $4 \cdot 10^{-13}$ իմպուլսի տևողությամբ Էլեկտրոններ, Ուլտրամանուշակագույն ճառագայթման աղբյուր և ջերմաստիճանների -100 -ից $+100^\circ\text{C}$ փոփոխման տիրույթ: Ինչպես նաև ուսումնասիրվել է 3,5 ՄԷՎ Էներգիայով գերկարճ իմպուլսով Էլեկտրոններով ճառագայթահարման դեպքում սիլիցիումի բյուրեղներում Էլեկտրոնֆիզիկական պարամետրերի վարքը, և հիմնականում դիտվել է կառուցվածքային կլաստերային արատների ձևավորում, ի տարբերություն միկրովայրկյանային ճառագայթահարմանը:

Կատարվել է 18 ՄԷՎ պրոտոնների ճառագայթահարման փորձարարական համակարգի նախապատրաստում նմուշների ֆիքսված չափաբաժիններով ճառագայթահարման համար, ինչպես նաև նախնական սիլիցիումի միաբյուրեղի ճառագայթահարում և ուսումնասիրություն:

2. Հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի ֆիզիկաօպտիկական հատկությունների կոմպլեքս ուսումնասիրում

Ջերմակարգավորիչ շերտերի ճառագայթային կայունության ուսումնասիրության նպատակով այս տարի իրականացվել է սիլիկատային նմուշների ճառագայթում 18ՄԷՎ Էներգիայի Էլեկտրոններով 10^{15} պր/սմ² չափաբաժնով, 300 Կ ջերմաստիճանում: Իրականացվել է նմուշների Ռենտգեն դիֆրակցիոն անալիզ, որի արդյունքում պարզվել է, որ անգամ ճառագայթումից հետո սիլիկատային նմուշները պահպանում են իրենց բյուրեղական կառուցվածքը: Նմուշների դիֆուզ անդրադարձման գործակցի չափման արդյունքները, ցույց են տալիս որ սիլիկատային նմուշները օժտված են բարձր անդրադարձման հատկությամբ և թեև ճառագայթումից հետո անդրադարձման գործակիցը նվազում է 10-15%-ով, սակայն այդ նվազումը թույլատրելիի սահմաններում է (20%):

Բացի վերը նշվածները արվել են նաև հիդրոթերմալ միկրոալիքային մեթոդով սինթեզված սիլիկատային նյութերի սպեկտրոսկոպիկ ուսումնասիրություններ՝ մասնավորապես, գրգռման և լյումինեսցենցիայի սպեկտրների չափում ՌԻՄ և տեսանելի տիրույթում (LUMEN սարքավորումների համակարգի միջոցով), ինչպես նաև կատարվել է արդյունքների մշակում և վերլուծություն:

3. Փնջի պրոֆիլի չափման նպատակով հիմնավորված, նախագծված և արտադրված է նոր տեսակի լարային մոնիտորներ

Մշակվել և պատրաստվել է Ցիկլոտրոն 18 պրոտոնային փնջի երկչափանի պրոֆիլի չափման կայան հիմնված տատանվող լարի մոնիտորների վրա: Առաջին անգամ չափվել են օդ դուրս բերված փնջի պրոֆիլները Ցիկլոտրոնի տարբեր էներգիաների համար:

Մշակվել է բարակ լազերային փնջերի չափման նոր տիպի համակարգ հիմնված տատանվող լարը որպես մինիատյուր սկաներ օգտագործման վրա: Վերամշակվել է լաբորատոր ստեղծ ուսանողական հայ-գերմանական ծրագրի շրջանակներում: Մշակվել և պատրաստվել է երկկողմանի գազի հոսքի չափիչ հիմնված տատանվող լարերը որպես գերզայուն ջերմաչափեր օգտագործման վրա: Կատարվել է գործիքի տրամաչափարկում: Սարքը ներկայացվել է Հայաստան – Ինժեներական շաբաթ 2021 ցուցահանդեսում:

Պատրաստվել է նախագիծ ուղղված տատանվող լարը որպես մոնիտոր բարձր նեյտրոնային փնջերի ֆլուենսը մետաղի հատկությունների փոխակերպումը չափելու համար: Նախագիծը ուղարկվել է Կուրչատովի ինստիտուտ համագործակցություն սկսելու նպատակով: Պատրաստվել է նախագիծ տատանվող լարը ճշգրիտ արքսելերոմետրեր/ինկլինոմետրեր նավիգացիոն համակարգերում ել վիբրոմետրիայում օգտագործման համար:

Հետազոտվել են հարթ ալիքում շարժվող ռելյատիվիստիկ մասնիկի Էլեկտրական դաշտի գծերը: Աշխատանքը կարևոր է ռելյատիվիստիկ մասնիկների ճառագայթման տարածական ստրուկտուրայի պատկերացման համար:

4. Պերովսկիտային նյութերի սինթեզ և օպտիկական հատկությունների ուսումնասիրում

Մոլորակային գնդադաշի մեթոդով սինթեզվել են կապար հալոգենային պերովսկիտային փոշիներ տարբեր բաղադրություններով: Ուսումնասիրվել է պերովսկիտների կայունության ելային նյութերից կախվածությունը: Ստացված փոշիների համար չափվել են յուրմիներեսցենցիոն, գրգռման և կլանման սպեկտրերը և բացատրվել մեխանիզմները:

5. Գրաֆենային հիմքով պերովսկիտային արևային բջիջների ստացում և ուսումնասիրում

Մասնավորապես ուսումնասիրվել է գրականությունը և նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում նշված բջիջների ստացման ուղղությամբ:

Հաջորդ տարվա ընթացքում նախատեսվում է ստանալ տարբեր խառնուրդներով պերովսկիտային նյութեր՝ բարելավված կայունությամբ և օպտիկական հատկություններով: Նախատեսվում է նաև ստանալ բարակ թաղանթներ և կիրառել դրանք արևային բջիջների ստացման համար:

6. Ռադիոկենսաբանական հետազոտություններ ԱՐԵԱԼ արագացուցչի էլեկտրոնային փնջի վրա

Համաձայն 2021 թ-ի համար նախատեսված աշխատանքային ծրագրի ընթացիք տարում կատարվել է տեսական վերլուծություններ նոր ցիկլի փորձերի հիմնավորման և իրականացման նպատակով, որոնք հնարավորություն կտան առկա պայմաններում և առկա սարքավորման կիրառմամբ բացահայտել թթվածնի, իբրև ռեակտիվ գործոնի դերը նախորդ տարի *E. coli* ցեղատեսակի բակտերիաների համար ստացված անսովոր կենսունակության կորերի տեսքը բացատրելու համար: Մշակվել է այդ փորձերի կատարման մեթոդաբանությունը հնարավոր սխալներից զերծ պահելու և խանգարիչ հանգամանքները շրջանցելու նպատակով: Մեթոդաբանությունը ստուգվել և հղվել է մոդելային փորձերի միջոցով:

4. Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն

Հաշվետու ժամանակահատվածում **Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոնը** ծավալել է գիտահետազոտական գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Գեոդեզիական հոսքերի հիպերբոլականություն;
- Հարլի լարվածություն, դիտողական այլ անոմալիաներ, մոդիֆիկացված գրավիտացիա;
- Գալակտիկական մութ հալոները ըստ Պլանկ արբանյակի միկրոալիքային տվյալների;
- Արհեստական բանականություն, մեքենայական ուսուցման մեթոդներ աստղաֆիզիկական տվյալների վերլուծությունում;
- Գերնորեր և գալակտիկաների մորֆոլոգիա:

Հիպերբոլականություն և տիեզերքի մեծ տարածքային հատկություններ

Հետազոտվել են տիեզերքում ցածր խտության տիրույթների /voids/ հիպերբոլական հատկությունները՝ բացասական կորության տարածություններում գեոդեզիականների հոսքերի վարքի միջոցով: Արտածվել է հիպերբոլականության կախումը այդ տիրույթների և պատերի պարամետրերից՝ պարբերական բաշխման դեպքում, ապա հաշվի առնել կախումը կարմիր շեղումից: Ստացված կախումները հնարավորություն են տալիս առնչել ցածր խտության տիրույթների պարամետրերը տիեզերքի մեծ տարածքային դիտողական տվյալներում գրանցված խտորումների հետ:

Երկու Հարլի հոսքեր

Յույց է տրվել, որ առկա հակասությունը Հարլի հաստատունի տեղական (local) և գլոբալ դիտողական մեծությունների միջև (Hubble tension) կարելի է բացատրել երկու տարբեր բնույթի հոսքերի միջոցով: Երկու հոսքերն էլ բնորոշվում են միևնույն կոսմոլոգիական հաստատունով, սակայն տեղականը համաձայն ՄքՔրեա-Միլնի սխեմայի, իսկ գլոբալը՝ Ֆրիդմանյան կոսմոլոգիական հավասարումների, և հետևաբար ունեն սկզբունքորեն տարբեր բնույթ: Արտածվել են հստակ ստորին և վերին սահմանափակումներ տեղական Հարլի հաստատունի մեծության համար:

ARTEMIS Science White paper

Մեծ ճշտության ժամանակային սինխրոնացման տեխնիկան՝ հիմնված օպտիկական հաճախության սանրի (optical frequency comb) և ռադիո հաճախության պարուրաձև բեկման վրա, առաջարկված է կիրառել Լուսնի վրա՝ ծրագրված ԱՐՏԵՄԻՍ, ՆԱՍԱ, նախագծի շրջանակներում (Science White paper; ARTEMIS Lunar Mission, NASA): Լուսնի, նաև Երկրի վրա տեղակայված նմանատիպ սարքավորումների պարամետրերի համեմատությունը հնարավորություն կտա մեծ ճշտությամբ ստուգել գրավիտացիոն դաշտի և առնչված հիմնարար ֆիզիկական պարամետրեր, էկվիվալենտության սկզբունքը: Հրատարակված է նաև հոդվածի ձևով:

Սև խոռոչի ստվերը, հորիզոնները (gedanken experiments)

Վերջին տարիների կարևորագույն հայտնագործություններից է համարվում M87-ի միջուկի խոշոր զանգվածով սև խոռոչի ստվերի (black hole shadow) գրացումը: Մեր հետազոտությունում ցույց է տրվել, որ դիտողական տվյալների միջոցով Շվարցշիլդ-դե Սիտտեր և Կեր- դե Սիտտեր մետրիկաների համար հնարավոր է ստանալ սահմանափակումներ Հարաբերականության ընդհանուր տեսության թույլ դաշտի մոտարկման պարամետրերի վրա:

Մութ գալակտիկական հալոները և մոդիֆիկացված գրավիտացիա

Յույց է տրվել, որ գալակտիկական հալոների դիտողական առնչությունների (scaling) միջոցով հնարավոր է ստանալ սահմանափակումների մոդիֆիկացված գրավիտացիայի պարամետրերի վերաբերյալ: Օգտագործվել են մեծ զանգվածով պարուրաձև գալակտիկաների համար Թալի-Ֆիշեր առնչության տվյալները, ինչպես նաև տվյալներ մոտակա 12 գալակտիկաներ կույտերի վերաբերյալ:

Մեքենայական ուսուցում և գրավիտացիոն ուսանյակներ

Մեքենայական ուսուցման ալգորիթմները կիրառվել են գրավիտացիոն ուսանյակների դիտողական տվյալների մշակման համար: Կատարվել է արհեստականորեն ստացված թվային պատկերների, ապա իրական տվյալների համեմատական մշակումը CNN (convolutional neural network) մոտեցմամբ, ստացվել են հավաստիության գնահատականներ գրավիտացիոն ուսանյակների դասակարգման վերաբերյալ:

Գերնորերը և պարուրաձև գալակտիկաների հատկությունները

Օգտագործելով 185 մոտակա գերնորերի տվյալները հետազոտվել են պարուրաձև գալակտիկաներում նրանց տեղադրման տիրույթները և դրանից բխող օրինաչափությունները՝ գերնորերի նախա-աստղերի բնույթի վերաբերյալ: Առաջին անգամ ցույց է տրվել ցածր աստղառաջացման տիրույթներում (deserts) արագ նվազող լուսատվությամբ գերնորերի գերակշռությունը:

Արդյունքները հրատարակվել են բարձր վարկանիշով (IF) ամսագրերում:

5.Տեղական ճառագայթների ֆիզիկայի բաժին

Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժնի գիտական աշխատանքների հիմնական ուղղություններն ու արդյունքները՝

2021 թվականը վճռորոշ տարի էր մթնոլորտում բարձր էներգիայի ֆիզիկայի համար (HEAP): Անցած տասնամյակի հետազոտությունները կենտրոնացված էին էլեկտրականացված մթնոլորտից մասնիկների հոսքերի չափման (Ամպրոպային Վերգետնյա Ավեացումներ ԱՎԱ), դրանց ծագման բացահայտման, ինչպես նաև GEANT4 և CORSIKA ծրագրային փաթեթներով ռեյաստիվիստական փառչող էլեկտրոնների հեղեղների երևույթների մոդելավորման վրա:

2021թ-ին մեր կողմից նոր՝ վճռական քայլ կատարվեց ուսումնասիրելով մթնոլորտային էլեկտրական դաշտը ամպրոպային ամպերով անցնող և երկրի մակերևույթին մասնիկների սպեկտրումետրերում գրանցվող մասնիկների հոսքերով: Այդ նոր մոտեցումը շատ հետաքրքիր արդյունքներ է տալիս, երբեմն հակասելով մթնոլորտային էլեկտրական դաշտի ուղղահայաց պրոֆիլի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներին, այնուամենայնիվ հիմնված մասնիկների ֆիզիկայի ճշգրիտ մեթոդների և էլեկտրամագնիսական փոխազդեցությունների լավ հաստատված տեսության վրա: Առաջին հերթին դա մթնոլորտային ուժեղ էլեկտրական դաշտերում էլեկտրոնների արագացման աշխատող մոդելի ստեղծումն էր: Արագածի վրա էլեկտրոնների ու գամմա ճառագայթների չափված և մոդելավորված հոսքերի համեմատությունը (իհարկե ուղղահայաց էլեկտրական դաշտի պրոֆիլի պարզեցված մոդելներով) ցույց է տալիս, որ ռեյաստիվիստական փառչող էլեկտրոնների հեղեղները կարող են առաջացնել ԱՎԱ-ներ՝ պարամետրերի բավականին լայն տիրույթում: Այնուհետև, օգտագործելով Արագածի և Լոմնիցկի Ստիտում (Սլովակիա) գրանցված ամենամեծ ԱՎԱ-ները, գնահատել ենք առավելագույն հասանելի պոտենցիալների տարբերությունը (լարումը) այդ գագաթների վրա, որոնք եղել են համապատասխանաբար 300 և 500 ՄՎ:

Այստեղ մենք օգտագործում ենք մթնոլորտային ուժեղ էլեկտրական դաշտերով անցնող “մյուռնային ճառագայթների” մոդուլացիան՝ ուսումնասիրելու համար, թե ինչպես կարող է բացահայտված՝ մյուռնների արգելակման երևույթն օգտագործվել մթնոլորտային էլեկտրական դաշտերի խաթարումները նկարագրելու համար [6]: Ի վերջո օգտվելով Արագած լեռան վրա՝ Արագածի Արևային Նեյտրոնների Սպեկտրոմետրի (ASNT) 24/7 ձևաչափով մշտադիտարկման արդյունքում ստացվող տվյալներից, մենք զարգացնում ենք ամպրոպային ամպերում էլեկտրական դաշտի ուղղահայաց պրոֆիլը գնահատելու մեթոդաբանությունը:

ԱՎԱ-ների և կայծակի պարպումների հեռավորությունների կորելացիոն վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ԱՎԱ մասնիկների հոսքը շատ ավելի բարձր է քան կանխատեսվում է: Ամպրոպային մթնոլորտում մասնիկների հոսքը, որի մեծ մասը հասնում է Երկրի մակերևույթին, բաղկացած է վայրկյանում 100ԿԷՎ էներգիայից բարձր էներգիայով 10^{18} մասնիկներից:

Տիեզերական ճառագայթների և մթնոլորտային ֆիզիկայի սիներգիան, որը կարող է առաջատար ուղղություն դառնալ մթնոլորտային ֆիզիկայի հետազոտության մեջ, թույլ է տալիս բացատրել մասնիկների բռնկումների բոլոր մասնիկների տեսակները մեկ շրջանակում, այսինքն՝ մթնոլորտային լայն հեղեղների հոսքերի հետևանքներ [9]: Այդ առատ ճառագայթումը կարող է ազդել երկրային կլիմայի և գլոբալ փոփոխությունների վրա: 2019-2021թ-երին չափված էներգետիկ սպեկտրները թույլ են տվել հայտնաբերել շատ մեծ (մինչև 200ԿՎ/մ) էլեկտրական դաշտ երկրի մակերևույթից 50-150մ բարձրությունների վրա, ինչը կարող է վճռորոշ հետևանքներ ունենալ ամպրոպի ժամանակ հրթիռների արձակման, ինչպես նաև օդանավերի շահագործման անվտանգության վրա:

Գործարկվող SEVAN ցանցը 2021 թվականին բացահայտել է նոր՝ հետաքրքիր արդյունքներ: SEVAN դետեկտորը Lomnický štít-ում (Սլովակիա) 2021թ.-ի սեպտեմբերի 12-ին գրանցել է Ամպրոպային Վերգետնյա Ավելացում (ԱՎԱ)՝ ցածր էներգիայի մասնիկների հոսքի 500%-ոց ավելացում: Աշխարհի ամենամեծ ԱՎԱ-ն, որում մասնիկների հոսքերը գերազանցել է ֆոնը 100 անգամ, նույնպես գրանցվել է Սլովակիայի SEVAN-դետեկտորում 2017 թվականին:

Ինչպես արդեն նշվել է, SEVAN դետեկտորներով գրանցված մյուռնների և գամմա ճառագայթների հոսքերի միջոցով գնահատվել են ամպրոպային ամպերի պոտենցիալների տարբերության առավելագույն արժեքները և հաստատվել են մյուռնների պակասորդի երևույթը: Ստեղծվել է ամպրոպային ամպերի լիցքային կառուցվածքը որոշելու նոր մեթոդ: Սլովակիայի

SEVAN դետեկտորն օգտագործվել է նաև հելիոսֆերային մագնիսական դաշտի, մթնոլորտային էլեկտրական դաշտի, կայծակնային ակտիվության և երկրորդային տիեզերական ճառագայթների հոսքերի միջև կապի ուսումնասիրության համար: Նշվեց SEVAN դետեկտորի առավելությունը՝ տարբեր մասնիկներն ու շեմային էներգիաները տարբերելու ունակությամբ: Ստացված արդյունքները գեկուցվել են Տիեզերական ճառագայթների միջազգային կոնֆերանսի (ICRC, Berlin, 2021), Եվրոպական երկրաֆիզիկական միության (EGU, Վիեննա, 2021) և այլ հանդիպումների ժամանակ: Էլեկտրոնների, ֆոտոնների և մյուսների հոսքերը, ինչպես նաև եղանակային պարամետրերը շարունակաբար մշտադիտարկվում են բոլոր տեղամասերում (աշխարհագրական տարբեր լայնություններ, երկայնություններ, բարձրություններ) և մուտքագրվում են ՏՃԲ-ի տվյալների բազա:

Բոլոր երկրների ֆիզիկոսները կարող են օգտագործել ՏՃԲ-ի կողմից տրամադրվող ADEI հարթակով բազմաչափ պատկերման և կորելացիոն վերլուծությունները իրենց սեփական և/կամ համատեղ աշխատանքի համար: Կուտակված ԱՎԱ տվյալների նոր տեսակը (Mendeleev տվյալների հավաքածուներ) ներկայացվել է 2021 թվականին, որը թույլ է տալիս HEPA համայնքին օգտագործել ԱՎԱ տվյալների բազաները՝ մասնիկների հոսքերը մթնոլորտային ֆիզիկայի բազմաթիվ խնդիրների լուծման համար:

6. Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին

Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի հիմնադիր ղեկավար Ալբերտ Էդուարդի Ավետիսյանի մահը ծանր և անդառնալի կորուստ էր: Նա 2010 թ. հիմնադրեց և մինչև 2021 թ. ղեկավարեց բաժինը՝ թողնելով հարուստ գիտատեխնիկական ժառանգություն, կայացած գիտական ուղղություն և հիանալի կոլեկտիվ: Անգնահատելի է Ալբերտ Ավետիսյանի դերը նաև IBA C18 ցիկլոտրոնի գործարկման մեջ, որն այսօր այդքան կարևոր է իզոտոպների արտադրության, նոր իզոտոպների հետազոտման և կիրառական ու ֆունդամենտալ ֆիզիկայի խնդիրների համար:

Բաժնի գործունեությունը նվիրված է բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակմանը, արտադրությանը: Աշխատանքներ են տարվում հետևյալ ռադիոակտիվ իզոտոպների հետազոտման ուղղությամբ՝ ^{99m}Tc , ^{67}Ga , ^{68}Ga և ^{64}Cu .

• ^{68}Ga

Մեկնարկել են Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) և 12 երկրների գիտահետազոտական ինստիտուտների և արտադրող ընկերությունների հետ համատեղ ^{68}Ga իզոտոպի արտադրությանն ուղղված աշխատանքները: Ծրագրի շրջանակում շուտով կներմուծվեն թանկարժեք հարստացված թիրախի նյութ (^{68}Zn) և անհրաժեշտ քիմիական խեժեր: Մշակվել է կարվելիք փորձերի մեթոդիկա: Մշակվում է համապատասխան թիրախի հենարանը (նյութի ընտրություն, փորձարկումներ):

• ^{99m}Tc

